ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Դատական դեպարտամենտի կարիքների համար նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-19/02» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«07» մարտի, 2019թ.
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Էդգար Տոնականյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի ղեկավար (Գնման Պատասխանատու,

հանձնաժողովի անդամներ՝

Արման Ղուկասյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ սնանկության դատարանի աշխատակազմի ղեկավար,

Կարեն Մելքոնյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

Արմինե Ալիխանյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի Շենգավիթ նստավայրի պատասխանատու,

Լիլիթ Հովհաննիսյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար:

հանձնաժողովի քարտուղար՝

Օֆելյա Ասատրյան՝ (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/ՄԻՄ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

1. Տեղեկություն՝ «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-19/02» ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտերի բացման մասին.

Հայտերը բացվել են www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային գնումների իրականացումն ապահովող համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով՝ 2019թ.-ի մարտի 7-ին, ժամը 11:00-ին:

2. Տեղեկություն՝ գնման առարկաների ընդհանուր գնի վերաբերյալ.

Գնման ընթացակարգը կազմակերպվել է <<գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

3. Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Մասնակցի անվանումը (անունը)	Էլեկտրոնային փոստի հասցեն
«ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ» ՍՊԸ	globalengineerllc@gmail.com
«ԱՔԱՐԱ» ՍՊԸ	Akara.ltd@mail.ru
«ՎԱ-ՄԱՅՆԴ» ՍՊԸ	---
«ՍԵՅՍՄԱԿԱՅՈՒՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» և «Բերդուս» ՍՊԸ-ների կոնսորցիում	norikbuniatyan@seismshin.am

4. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

«ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ», «ԱՔԱՐԱ» և «ՍԵՅՍՄԱԿԱՅՈՒՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

«ՎԱ-ՄԱՅՆԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում են հրավերով պահանջվող փաստաթղթերը. Համակարգում որևէ փաստաթուղթ /այդ թվում՝ գնային առաջարկները/ կցված չեն երևում /հնարավոր չէ դիտել ֆայլերը/: Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 4-րդ ենթակետով, 41-րդ կետով՝ հանձնաժողովը որոշեց **«ՎԱ-ՄԱՅՆԴ» ՍՊԸ**-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0

5. Տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի /հայտում առկա փաստաթղթերի/՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

«ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ», «ԱՔԱՐԱ» և «ՍԵՅՍՄԱԿԱՅՈՒՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐԳԱՅՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ների կողմից ներկայացված հայտերը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում են բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

6. <u>Մասնակիցների առաջարկած գները՝</u>

Հ/Հ	Ծառայության անվանումը	Գնային առաջարկները (ՀՀ դրամ)		
		«ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ» ՍՊԸ		
		Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	2	3	4	5
1	ՀՀ սնանկության դատարանի վարչական շենքի վերահատակագծման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ	1 720 000	-	1 720 000

Հ/Հ	Ծառայության անվանումը	Գնային առաջարկները (ՀՀ դրամ)		
		«ԱՔԱՐԱ» ՍՊԸ		
		Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	2	3	4	5
1	ՀՀ սնանկության դատարանի վարչական շենքի վերահատակագծման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ	1 986 000	-	1 986 000

Հ/Հ	Ծառայության անվանումը	Գնային առաջարկները (ՀՀ դրամ)		
		«ՍԵՅՍՄԱԿԱՅՈՒՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐԳԱՅՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» և «Բերդուս» ՍՊԸ-ների կոնսորցիում		
		Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	2	3	4	5
1	ՀՀ սնանկության դատարանի վարչական շենքի վերահատակագծման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման	4 400 000	880 000	5 280 000

	աշխատանքներ			

7. Տվյալներ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի վերաբերյալ.

Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.
-Ընթացակարգի 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ» ՍՊԸ-ին,
Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:
Հանձնաժողովի քարտուղարին.
Ղեկավարվելով Կարգի 43-րդ կետով՝
1) հայտերի բացման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը հրապարակել տեղեկագրում,
2) հայտերի բացման նիստին ներկա անդամների կողմից ստորագրված շահերի բախման բացակայության մասին հայտարարության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը հրապարակել տեղեկագրում,
3) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել համապատասխան հարցումը,
4) ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2019թ. մարտի 13-ը ներառյալ, ներկայացնել Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված փաստաթղթերը:
Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.
-ղեկավարվելով Կարգի 46-րդ կետով՝ գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2019թ. մարտի 14-ին, ժամը 11:00-ին:
Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝

Է. Տոնականյան

(ստորագրություն)

Հանձնաժողովի անդամներ՝

Ա. Ղուկասյան

(ստորագրություն)

Կ. Մելքոնյան

(ստորագրություն)

Ա. Ալիխանյան

(ստորագրություն)

Լ. Հովհաննիսյան

(ստորագրություն)

Գնումները համակարգող՝
Օ. Սաատրյան

(ստորագրություն)